



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՐԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Օգոստոսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

Հիմնական օդերեվոլյուցիոնական առանձնահատկություններ


Օգոստոսի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 11-13-ին. Տավուշում գրանցվել է +32...+36°C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +31...+33°C, նախալեռնային շրջաններում՝ +39...+41°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +38...+40°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Շիրակում՝ +31...+36°C (Աշոցք՝ +30°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +30...+34°C, նախալեռնային շրջաններում՝ +36...+38°C, Գեղարքունիքում՝ +28...+32°C (Սեյնյուվան՝ +26°C), Լոռիում՝ +29...+32°C, Արմավիրում՝ +39...+41°C, Արարատում՝ +40...+42°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +30...+32°C, նախալեռնային շրջաններում՝ +36...+41°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 19-ին և 20-ին. Տավուշում +17...+18°C (Դիլիջան՝ +10°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +16...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +10...+12°C, (Սիսիան՝ +4°C), Շիրակում՝ +11...+13°C (Աշոցք՝ +7°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +12...+14°C (Հանքավան՝ +6°C), նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C, Գեղարքունիքում՝ +10...+14°C, (Գավառ՝ +6°C) Լոռիում՝ +10...+14°C (Տաշիր՝ +7°C), Արմավիրում՝ +20...+22°C (Արմավիր՝ +14°C), Արարատում՝ +16...+18°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +6...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+20°C:


Տասնօրյակային տեղումներ



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 5-9մմ (32-77%), Լոռիում՝ 0.4-3 մմ (2-27%), Տավուշում՝ 1.2մմ (9%), Գեղարքունիքում՝ 0.4-1մմ (3-11%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0.8մմ (13%), նախալեռներում՝ տեղումներ չեն դիտվել, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ տեղումներ չեն դիտվել, նախալեռներում՝ 0.8-3մմ (10-70%):

Ողջ փասնօրյակի ընթացքում Արագածօտնում, Կոտայքում, Արմավիրում, Արարատում, Վայոց ձորի և Սյունիքի հովտային շրջաններում դիտվել է առանց տեղումների եղանակ:


Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Օգոստոսի երկրորդ փասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +5...+7°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածօտնի նախալեռներում՝ +13...+18°C, Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +12... +17°C աստիճան:


**Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների
(օգոստոսի երկրորդ տասնօրյակ)**

Օգոստոս երկրորդ տասնօրյակի NDVI արժեքները



Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է համեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը: NDVI-ը սահմանում է -1.0-ից մինչև 1.0, արժեքներ, որտեղ բացասական արժեքները համընկնում են բուսազուրկ տարածքներին: Ելնելով LANDSAT 8 արբանյակի տվյալների տարածական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ օգոստոսի երկրորդ տասնօրյակում երաշտային պայմաններ դիտվել են Սյունիքի հովտային, Արագածոտնի նախալեռնային և Արարատյան դաշտի առանձին հատվածներում:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները



Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական մշակաբույսերի աճը, զարգացումը և դաշտային աշխատանքները, պտղաբույսերի, հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի բերքահավաքը:

Հացահատիկային մշակաբույսեր



Լեռնային շրջաններում դիտվել է գարնանացան ցորենի լրիվ հասունացում: Շարունակվել է գարնանացան գարու և աշնանացան ցորենի բերքահավաքը:

Նախալեռնային շրջաններում դիտվել է եգիպտացորենի կաթնային հասունացում, բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում կազմել է 202 սմ:

Պտղաբույսեր, Խաղող



Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել է հնդավորների պտուղների հասունացումը, վաղահաս սորտերի բերքահավաքը:

Հովտային շրջաններում կատարվել է թզենու բերքահավաք, շարունակվել է արքայանարինջի և սերկևիլի պտուղների ձևավորումը և խաղողի միջահաս սորտերի (կախեթ, գառան դմակ) հասունացումը:

Բանջարանոցային մշակաբույսեր և կարտոֆիլ

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի կանաչ հասունացումը և որոշ սորտերի բերքահավաքը:

Շարունակվել է կաղամբի գլխի փաթաթումը, դիտվել է վաղահաս սորտերի հասունացում: Կարտոֆիլը գտնվել է պալարագոյացման փուլում, դիտվել է բույսի վերգեղնյա մասի թառամում:

Հովտային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի և ձմերուկի հասունացումն ու բերքահավաքը:



Խոտաբույս, ծխախոտ



Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը, բույսի բարձրությունը հասել է 30սմ-ի:

Ծխախոտ գտնվել է ներքին հարկի տերևների տեխնիկական հասունացման փուլում, բույսի բարձրությունը կազմել է 68 սմ: